ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գառու Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
66	GARU GROUP	Գառու Գրուպ ՍՊԸ	Կոշիկ՝ կիսաճտքավոր Կիսաճտքավոր կոշիկը բաղկացած է կոշկերեսի քթամասից, հետևամասից, արտաքին գոտուց, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից /տակացուից/ և հանովի-դնովի ներդիրից, ԳՕՍՏ 19137-89-ով նախատեսված կիսաճտքավոր կոշիկներին համարժեք: Քթամասը մշակված է ամբողջական առաջամասով և ճտքերի կրնկամասում՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով: Լեզվակը ամրացված է առաջնամասին և ճտքերին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են մաշվածադիմացկուն թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը կոշիկի ներսամասի դետալներ:Կիսաճտքավոր կոշիկի երեսացուն պետք է լինի խոշոր եղջերավոր անասունի կաշվից՝ ստացված քրոմային դաբաղման եղանակով, սև գույնի, բարձր որակի բնական մակերեսով /կաշվի մշակումը նախշով /նակատով/ առանց վնասվածքների/, մշակված անջրանցիկ /հիդրոֆոբիկ ծածկույթով: Կաշվի անջրաթափանցելիության աստիճանը դինամիկ

			վիճակում պետք է ապահովի 2-4 ժամ: Կոշիկը պետք է ապահովի օդափոխանակությունը, այսինքն՝ օդի և գոլորշու անցանելիությունը և ջերմահաղորդականաությունը, որը կապահովի քրտնակլանումը կամ օդափոխումը: Կոշկերեսի քթամասի և հետնամասի նախշով կաշվի հաստությունը պետք է լինի 2,0 -2,2 մմ, լեզվակը՝ 1.2- 1,4 մմ, իսկ ճտքերը՝ 1.8 – 2,0 մմ հաստության, քթամասն ու կրնկամասը՝ կոշտ, կրնկամասի բարձրությունը՝ համաձայն ԳՕՍՏ 19137-89 1.3.3 կետի, շեղումները՝ հմաձայն նշված ԳՕՍՏ-ի 1.3.5 կետի պահանջներին: Թքամասը և կրնկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում՝ քթամասը 2.0-2.4մմ, իսկ կրնկամասը՝ 2.6-3.0 մմ հաստությամբ /թույլատրելի է երկշերտով: Մշակված նյութերը պետք է լինեն այնպիսի հաստությամբ, որ շահագործման ողջ ընթացքում թույլ չտան կոշիկի քթամասի և կրնկամասի դեֆորմացում: Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված, նվազագույնը 2.0 մմ հաստության բնական հումքից՝ պադոշից /խոշոր եղջերավոր անասունի վզակաշի կամ մեջքակաշի/ /վարատոկ, չեպրակ/, ԳՕՍՏ-29277 և կոշիկի համար նախատեսված 2.0-2.4 մմ հաստության ստվարաթղթից /ԳՕՍՏ9542/, որոնց միջև դրվում է 11-14սմ երկարության, 0.8–1.2 սմ լայնության և 0.7-1.0 մմ հաստության մետաղական սուպինատոր: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է 1.2-1.4 մմ հաստության և 2.0-3.0 սմ լայնության բնական կաշվից, որի միջուկը մշակվում է 5.0-7.0 մմ հաստության,60±0.5կգ/մ3 խտությամբ սպունգե/պենոպոլիուրետան/ նյութով: Լեզվակը պետք է լինի փակ փականով 1.2-1.4մմ հաստության կաշվից կամ ընդհանուր լեզվակի կաշվից,բարձրությունը՝ ճտքի վերին եզրից ներքև 5-7սմ:Ճիտքը և քթամասը կարակցված են չորս կարով, որի ամրությունը առնվազն 150Ն/սմ է: Կրնկամասը, ճիտքն ու հետևամասի արտաքին գոտին կարակցված են 4 կարով, որի ամրությունը առնվազն 115 Ն/սմ է՝ համաձայն ԳՕՍՏ-9290-ի: Կոշիկի ճտքերի բարրությունը 40-44 միջին չափսի համար 21-23սմ է, մնացած չափսերի շեղումը՝ ± 3մմ: Բարձրությունը չափվում է ճտքի ներսի

			մասով, կրնկամասում , հիմնական ներդիրից մինչև ճտքի վերին եզրը: Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ կոճականցքերով (կախված կոշիկի չափսերից) ցինկապատ՝ պատված պաշտպանիչ ներկով, որը կապահովի խոնավ եւ ցածր ջերմաստիճանի ժամանակ կորոզիայից և կկանխարգելի քուղերի սառցակալումը: Թույլատրվում է վերևի հինգ զույգի փոխարեն նաև կեռիկների կիրառում: Քուղերը պետք է պատրաստված լինեն ամուր եւ անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, որի որակը կապահովի կոշիկի սահուն եւ արագ քուղավորումը, յուրաքանչյուրի վերջույթները (նակոնեչնիկները) թերմոմշակված՝ երկարությունը 1.2-1.6 սմ: Քուղերի երկարությունը առնվազն՝37-41 չափսերինը 160սմ, 42-48 չափսերինը՝ 170սմ: Ներբանը (տակացուն) պետք է պատրաստված լինի մաշվածադիմացկուն ռետինից, պետք է ունենա (ապահովի) առավելագույն չափով չսայթակելու հատկություն և հագեցած լինի խորը ու ինքնամաքրվող հետքի զարդանախշերով: Ներբանը պետք է լինի միաձույլ: Թույլատրվում է կիրառել նաև կոմբինացված ներբան, որը բաղկացած կլինի՝ քայլքի շերտից (գետնին հպվող)՝ կաղապարված մաշվածադիմացկուն ռետինից պատրաստված և միջանկյալ շերտից՝ պոլիուռետանից: Կոմբինացված ներբանով պատրաստված լինելու դեպքում բոլոր շերտերը իրար պետք է ամրացված լինեն ձուլման եղանակով: Ներբանի ջերմակայունությունը և ցրտադիմացկունությունը պետք է ապահովի -40C-ից +60C, ապահովելով ճկակայունություն՝ շարային քայլի և կեցվածքի համար: Ներբանի (տակացուի) միջնամասում պետք է դաջված լինի կոշիկի չափսը (թվերով) , մաշվածադիմացկանության վերաբերյալ նշում և արտադրող կազմակերպության անվանումը :Ներբանը կոշիկի հիմնական ներդիրին և վերնամասին ամրանում է ձուլման եղանակով, ներբանի խզման բեռնվածությունը պետք է կազմի առնվազն 200Ն/սմ է՝ համաձայն ԳՈՍՏ 19137-89-ի: Ներբանի գետնին հպվող շերտի՝ ինքնամաքրվող հետքերի զարդանախշերի երկայնական կտրվացքի նվազագույն հաստությունը (խորությունը) կրնկամասում և ոտնաթաթի հատվածումներում՝ 6-8 մմ:

			Ներբանի գետնին հպվող շերտի երկայնական կտրվածքի հաստությունը 4-6 մմ: Քթամասի բարձրությունը գետնից՝ 1,8-2,8 սմ: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ և առանց ճոճվածքի: Հանովի-դնովի ներդիրը պատրաստված է բնական հումքից՝ լավ հարթեցված պադոշից (խոշոր եղջերավոր անասունի մեջքամասի կամ վզամասի կաշվից, ԳOUS-29277 և ԳOUS-1903), կոշիկի չափսին համապատասխան, հաստությունը՝ 2.0 մմ: Լեզվակի արտաքին երեսի վերին հատվածում պետք է դաջված լինի արտադրող կազմակերպության անվանումը, «Արտադրված է ԱԱԾ կարիքների համար, վաճառքն արգելվում է» տեքստը: Կիսաճտքավոր կոշիկների արտադրման համար խստորեն արգելվում է օգտագործել խոզի կաշի: Կիսաճտքավոր կոշիկի աջ ու ձախ զույգը պետք է լինի միևնույն չափսերի, լայնության և կառուցվածքի: Յուրաքանչյուր հանձնված խմբաքանակի համար մատակարարը պարտավոր է ներկայացնել ՀՀ-ում արտոնագրված կամ հավատարմագրված կազմակերպության կողմից իրականացված կիսաճտքավոր կոշիկների լաբորատոր հետազոտության արդյունքները՝ օգտագործված բոլոր կաշիների հաստության, ինչպես նաև ներբանի խզման բեռնվածության վերաբերյալ: Մատակարար կազմակերպությունը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց ոչ ուշ քան 7 /յոթ/ օրացուցային օրում Պատասխանատու ստորաբաժանմանը (ՊՍ) պետք է ներկայացնի առաջարկվող ապրանքատեսակի երկուական զույգ՝ հսկման նմուշներ: Նմուշները պետք է լինեն 41 և 43 չափսի, համապատասխանեն տեխնիկական բնութագրում նշված պահանջներին: Ներկայացված հսկման նմուշների հետ՝ Մատակարար կազմակերպությունը պարտավոր է ՊՍ ներկայացնել կիսաճտքավոր կոշիկի արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված գծագրական A4 չափսի ստվարաթղթին, վերևվում նշված նյութի անվանումով, և դրանց վերաբերյալ որակի հավաստագրերը (եթե առկա են): Ներկայացված կոշիկի նմուշները համաձայնեցվում է (արտաքին և կառուցվածքային համապատասխանությունը) Պատվիրատույի հետ, որից հետո

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Գառու Գրուպ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом << ԱԱԾ-ՏՆՏԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/5-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		технические характеристики
	фирменное наименование	наименование производителя	
66			Պատվիրատուն մատակարարին տրամադրում է կիսաճտքավոր կոշիկի քանակները ըստ չափսերի : Ըստ ժամանակացույցի պահեստ մատակարարված ապրանքատեսակի ընդունումն իրականացնելու նպատակով ապրանքատեսակի (2 զույգ, տարբեր չափսերի) վերահսկման նմուշներ բերվում են պատասխանատու ստորաբաժանում՝ արտաքնապես և կառուցվածքային համապատասխանությունը հետազոտելու, հսկման նմուշների հետ համեմատելու համար: Ապրանքը համարվում է Պատվիրատուի կողմից ընդունված՝ տեխնիկական բնութագրին համապատասխանելու և լաբորատոր փորձաքննության ՛՛որակի եզրակացության՛՛ արդյունքների դեպքում: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 36-48 չափսերի: Փաթեթավորումը առնվազն հնգաշերտ ստվարթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10 զույգ, արկղերը պետք է լինեն պիտակավորված (նվազագույնը 8սմ*15սմ չափսի), որի վրա պետք է տեսանելի նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, իսկ արտադրման ամիսը և տարեթիվը լրացվում է ձեռքով: Մատակարարը պարտավոր է երաշխավորել մատակարարված կոշիկի որակի համար, կրման /շահագործման/ ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (8 ամիս), իսկ ժամկետից շուտ շարքից դուրս եկած քանակը անհատույց փոխարինել նորերով 14 օրացուցային օրվա ընթացքում: Փոխարինման ժամկետը սկսվում է հաշվարկվել պատվիրատուի կողմից գրավոր տեղեկացվելու հաջորդ աշխատանքային օրվանից: * Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ: